

**ԿԻՊՐՈՍԻ ԽՆԴՐՈՒԹՄ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՈՒ ԹՈՒՐԻՔԻԱՅԻ  
ՆԵՐԳՐԱՎՎՈՒՄԸ ԵՎ ԽՆԴՐԻ ՄԻՋԱԶԳՎՅՆԱՑՈՒՄԸ**

*Բանալի բառեր՝ Կիպրոս, Մեծ Բրիտանիա, Հունաստան, Թուրքիա, Մակարիոս III, ԷՕԿԱ, Յյուրիխ-Լոնդոնյան համաձայնություններ*

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո աշխարհում սկսվեց հակազաղութային, ազգային-ազատագրական շարժումների վերելք: Չնայած նրան, որ Մեծ Բրիտանիան հաղթողների թվին էր պատկանում, բայց պատերազմի ժամանակ նա կրել էր ահռելի մարդկային և նյութական կորուստներ: Արդեն իսկ նշմարվում էին Բրիտանական գաղութային կայսրության փլուզման նախադրյալները: Գաղութային համակարգի փլուզմանն էր նպաստում նաև նոր ստեղծված «երկրներ աշխարհակարգը» և սողացող «սառը պատերազմը»: Այս ամենի ֆոնին Կիպրոսում նույնպես սկսվում է հակազաղութային շարժում, որն ըստ էության հույների ազգային-ազատագրական պայքարն էր հանուն «Էնոզիսի»:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ հույն-կիպրացիները լիովին հավատարիմ էին մնացել Մեծ Բրիտանիային և ակտիվորեն մասնակցել էին պատերազմին: Դաշնակիցների կողմից ընդհանուր առմամբ պատերազմին, Մեծ Բրիտանիայի կողմից, կռվել էին մինչև 30000 հույն-կիպրացի կամավորներ<sup>2</sup>: Այս ամենը հաշվի առնելով, հույն-կիպրացիներն ավելի ակտիվորեն էին պահանջում «Էնոզիսի» իրականացում:

Ի պատասխան հույն-կիպրացիների «Էնոզիսի» պահանջին, Մեծ Բրիտանիան առաջարկում է Կիպրոսին «տալ» նոր սահմանադրություն և ներքին ինքնավարություն, ինչը սակայն կտրուկ մերժվում է հույն-կիպրացիների կողմից, որոնք պահանջում էին միայն ինքնորոշում: «Էնոզիսի» համար պայքարում հատկապես ակտիվ դեր էր տանում հոգևորականությունը: Դեռևս 1947 թ., երկար դադարից հետո, տեղի ունեցան Կիպրոսի արքեպիսկոպոսի ընտրություններ: Արդեն 1948 թ.,

<sup>1</sup> ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի ասպիրանտ, Է. փոստ՝ rafael.khachatryan77@gmail.com

<sup>2</sup> Loizides N. G., Ethnic Nationalism and Adaptation in Cyprus, International Studies Perspectives (2007) 8, p. 175.

նոր արքեպիսկոպոս Մակարիոս II-ի կողմից ստեղծվում է «Էթնարիսի խորհուրդը», որը և լայն շարժում է սկսում «Էնոզիսի» համար<sup>3</sup>:

Մակայն, «Էնոզիսի» համար պայքարում ամենամեծ ներդրումն էր ունենալու հաջորդ արքեպիսկոպոսը՝ Մակարիոս III-ը: Նոր երիտասարդ արքեպիսկոպոսը (37 տարեկան) ծնվել էր 1913 թ.-ի օգոստոսի 13-ին, Պաֆոսի մոտակայքի Անտ Պանայա գյուղում: 1938 թ. նախ ընդունվել էր Աթենքի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետը, այնուհետև 1946 թ. կրթությունը շարունակել էր Բոստոնի համալսարանում, ուսումնասիրելով կրոնի սոցիոլոգիա: Վերադառնալով Կիպրոս, նա կարճ ժամանակում ձեռք է բերում «Էնոզիսի» համար ակտիվ պայքարողի համբավ և 1950 թ.-ի օգոստոսի 20-ին ընտրվում է Կիպրոսի արքեպիսկոպոս<sup>4</sup>: Հետաքրքրական է, որ իր ընտրության ժամանակ Մակարիոս III-ը խոստացել էր իրեն հանգիստ չտալ մինչև մայր Հունաստանի հետ միավորումը<sup>5</sup>:

Դեռևս Կիտիոնի եպիսկոպոս եղած ժամանակ Մակարիոս III-ը, «Էնոզիսի» նկատմամբ հույն-կիպրացիների վերաբերմունքը հասկանալու համար, 1950 թ. հունվարի 15-22-ը եկեղեցու ներսում իրականացնում է հանրաքվե: 224 757 հույն-կիպրացիներից 215 108, կամ 95,7%-ը քվեարկում են «Էնոզիսի» օգտին: «Էնոզիսի» օգտին են քվեարկում նաև 800 թուրք-կիպրացիներ, սակայն Կիպրոսի թուրքական համայնքի մեծամասնությունը հանրաքվեին չի մասնակցում: Բրիտանական գաղութային վարչակարգը սակայն հրաժարվում է ճանաչել հանրաքվեի արդյունքները<sup>6</sup>:

Կիպրոսի խնդրին միջազգային արձագանք տալու համար Մակարիոսը նպատակ ուներ դիմելու ՄԱԿ-ին, սակայն, ըստ ՄԱԿ-ի կանտոնադրության, դիմելու իրավունք ունեին միայն նրա կազմի մեջ մտնող երկրները: Այսպիսի իրավունք ուներ Հունաստանը, որին էլ օգնության խնդրանքով դիմեցին հույն-կիպրացիները: Մակայն, Հունաստանի վերաբերմունքը «Էնոզիսի» նկատմամբ հակասական էր: Հունաստանը բավական թույլացած էր 1946-1949 թթ. քաղաքացիական պատերազմի և մշտապես առկախված «կոմունիստական սպառնալիքի» պատճառով: Մինևույն ժամանակ, Հունաստանը մեծ կախվածության մեջ էր գտնվում բրիտանական և ամերիկյան ռազմական ու տնտեսական

<sup>3</sup> Иванова И. И., Колмыков С. Я., Мейер М. С. и др., 'Республика Кипр', Справочник. 3-е издание, М., 1992, <http://geography.su/books/item/f00/s00/z0000086/st014.shtml>

<sup>4</sup> Венедиктов В. Ю., Христианнейший из президентов, [https://www.ng.ru/ng\\_religii/2011-11-02/7\\_makaros.html](https://www.ng.ru/ng_religii/2011-11-02/7_makaros.html)

<sup>5</sup> The Middle East and North Africa 2019, 65th Edition, Abingdon and New York, 2018, p. 156.

<sup>6</sup> Иванова И. И., Колмыков С. Я., Мейер М. С. и др., 'Республика Кипр', Справочник. 3-е издание, М., 1992, <http://geography.su/books/item/f00/s00/z0000086/st014.shtml>

օգնությունից և ստիպված էր Մեծ Բրիտանիայի նկատմամբ վարելու «զուսպ» արտաքին քաղաքականություն: Հատկապես տպավորիչ են 1950 թ. Գեորգիոս Պապանդրեուի խոսքերը. «Հունաստանն այսօր շնչում է երկու թոքերով՝ մեկը բրիտանական, մյուսն ամերիկյան, և այսպիսով, նա չի կարող իրեն թույլ տալ որպեսզի Կիպրոսի խնդիրն առաջ բերի շնչահեղձություն»<sup>7</sup>:

Իրավիճակը Հունաստանում սկսվում է փոխվել 1952 թ.-ից: Հաղթանակով ավարտելով կոմունիստների դեմ պատերազմը, 1952 թ. Հունաստանը անդամակցում է ՆԱՏՕ-ին: Միաժամանակ օգտվելով «Մարշալի պլանից», Հունաստանն աստիճանաբար սկսել էր դուրս գալ տնտեսական ճգնաժամից: Սրա հետ մեկտեղ, 1952 թ. նոյեմբերից Հունաստանում իշխանության էր եկել մարշալ Ալեքսանդրոս Պապագոսը, ով «Էնոզիսի» հավատարիմ աջակից էր և կողմ էր Կիպրոսի հարցում ակտիվ արտաքին քաղաքականություն վարելուն:

Արդեն 1952-1953 թթ., ԱՄՆ-ի պետդեսպարտամենտի և Հունաստանում ԱՄՆ-ի դեսպանության միջև ներքին դիվանագիտական հաղորդումներից տեղեկանում ենք, որ ԱՄՆ-ի համար ցանկալի չէր Կիպրոսի հարցի միջազգայնացումը: Հարցի միջազգայնացումը կարող էր սրել ԱՄՆ-ի դաշնակիցների՝ Հունաստանի, Թուրքիայի և Մեծ Բրիտանիայի հարաբերությունները միմյանց հետ: Դիվանագիտական հաղորդումներից մեկից տեղեկանում ենք, որ հունական կողմը ցանկություն ուներ, Հունաստան առաջիկա այցի ժամանակ, Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Էնթոնի Իդենի հետ բանակցություններ վարել Կիպրոսի հարցով: Նախատեսվում էր քննարկել կղզուն ինքնավարություն տալու և 2-3 տարի հետո անկախության վերաբերյալ հանրաքվե կազմակերպելու հարցերը<sup>8</sup>: Սակայն, Մեծ Բրիտանիան Կիպրոսի հարցում ցանկանալով պահել իր ստրատեգիական դիրքերը, որդեգրել էր բավական կոշտ դիրքորոշում: Իդենը կտրուկ հրաժարվում է քննարկել Կիպրոսի հարցը Պապագոսի հետ, բացի դրանից, Մեծ Բրիտանիան բացահայտ արհամարհում է Պապագոսի երկկողմ բանակցություններ սկսելու առաջարկը<sup>9</sup>:

Բացի այս ամենից, բրիտանական խորհրդարանում 1954 թ. հայտարարվեց, որ Կիպրոսի նոր սահմանադրության մասին առաջարկությունը քննարկման չի ենթարկվելու: Միաժամանակ հստակ

<sup>7</sup> Scherer J. L., *Blocking the Sun, The Cyprus Conflict*, **Minneapolis, 1997**, p. 12.

<sup>8</sup> United States Department of State, *Foreign relations of the United States, 1952-1954, Eastern Europe, Soviet Union, Eastern Mediterranean (1952-1954)*

<https://search.library.wisc.edu/digital/AUYYSZQPR54YXH9B>, p. 676.

<sup>9</sup> Նուն տեղում էջ. 685.

աավեց. «Բրիտանական Ազգերի համագործակցության որոշ տարածքներ, հատուկ հանգամանքների պատճառով, երբեք չեն լինի լիովին անկախ»<sup>10</sup>: Սա ուղղված էր Կիպրոսի դեմ:

Կիպրոսի հարցում բրիտանական կողմի կոշտ դիրքորոշումը հունական կողմին այլ տարբերակ չէր թողնում, քան կիպրական հարցի միջազգայնացումն էր: 1954 թ. ամռանը, Հունաստանը Կիպրոսի անկախության հարցով պաշտոնապես դիմեց ՄԱԿ-ին: 1954 թ. վերջին, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան ի վերջո ընդունում է 814 (IX) բանաձևը, որով Կիպրոսի խնդրի քննարկումը հետաձգվում է անորոշ ժամանակով: Չնայած սոցբրոկի և նոր անկախացած երկրների աջակցությանը, Մեծ Բրիտանիային հաջողվում է հասնել իր ուզածին:

Մեծ Բրիտանիայի Կիպրոսի հարցում դիրքորոշման կոշտացման պատճառը գտնելու համար անհրաժեշտ է, առաջին հերթին հասկանալ բրիտանական գաղութային կայսրությունում Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընթացող իրադարձությունների բնույթը: Բրիտանական գաղութային կայսրությունը սկսել էր անկասելիորեն թուլանալ: Բրիտանացիներն արդեն դուրս էին եկել Հնդկաստանից և Պաղեստինից: 1954 թ., Եգիպտոսի հետ կնքված պայմանագրով, Մեծ Բրիտանիան պարտավորվել էր իր գորքերը դուրս բերել Սուեզի ջրանցքի գոտուց: Միաժամանակ, Մեծ Բրտանիան արաբական աշխարհում ուներ կարևոր նավթային հետաքրքրություններ, իսկ նավթային ուղիներն ամեն գնով անհրաժեշտ էր հսկել: Ստեղծված պայմաններում Կիպրոսը դառնում էր Մեծ Բրիտանիայի համար անփոխարինելի հենակետ Արևելյան Միջերկրականում: Կիպրոսում, դեռևս Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, կառուցվել էին ռազմածովային և ռազմաօդային բազաներ: Հաշվի առնելով, որ կղզին ուներ հարմար դիրք և գտնվում էր Մերձավոր Արևելքի հիմնական երկրներից մոտավորապես 150 կմ հեռավորության վրա, Մեծ Բրիտանիան նպատակ ուներ կղզին օգտագործելու որպես «անխորտակելի ավիակիր»<sup>11</sup>:

Սակայն, Կիպրոսում ծավալվող հույն-կիպրացիների ազգային-ազատագրական պայքարը սպառնում էր լրջորեն վնասել Մեծ Բրիտանիայի ստրատեգիական շահերին: Այս ամենը հասկանալով, բրիտանական վարչակարգը, հույների ազգային-ազատագրական պայքարը թուլացնելու նպատակով, փորձում է հրահրել կոնֆլիկտ Կիպրոսի երկու համայնքների միջև և ընդդեմ հունական «էնոզիսի»

<sup>10</sup> Cyprus a country study, Edited by Solsten E., Fourth Edition, First Printing, 1993, p. 28.

<sup>11</sup> Сафрастьян Р., Турция и кипрская проблема: эпизоды «Большой игры», «21-й ВЕК», N 2, 2005, с. 55.

օգտագործել թուրք-կիպրացիների ազգային զգացմունքները և վախերը: Թուրք-կիպրացիներն ավանդաբար բավական պասիվ էին Կիպրոսի քաղաքական կյանքում: Թուրք-կիպրացիների առաջին քաղաքական միավորումը ստեղծվեց 1943 թ., դա Կիպրոս կղզու թուրք փոքրամասնության կազմակերպությունն էր (KATAK): Մյուս քաղաքական կազմավորումը 1944 թ. ստեղծված Կիպրոսի թուրքական ազգային ժողովրդական կուսակցությունն էր (KMTHP): Սակայն, առավել ազդեցիկը 1949 թ. այս երկու կազմակերպություններից ձևավորված Կիպրոսի թուրքական ազգային միացյալ կուսակցությունն էր<sup>12</sup>:

Այս կուսակցությունների ստեղծման հիմնական նպատակը համարվում էր «Էնոզիսին» հակադրվելը: Թուրք-կիպրացիների քաղաքական կուսակցությունների ստեղծման ուսումնասիրման գործում հատկապես հետաքրքրական է 1971 թ. Փազլ Բյուչյուքի հարցազրույցը, որում նա ասում է. «Չնայած նրան, որ առաջին համայնքային կուսակցությունները ստեղծվեցին 40-ական թթ., թուրք-կիպրական համայնքը սկսեց իրականում քաղաքական ակտիվություն ցուցաբերել միայն 50-ական թթ. կեսերից»: Ըստ նրա խոսքերի, քաղաքական կառույցների ակտիվությունը բխում էր ոչ միայն «Էնոզիսին» թուրք-կիպրացիների առաջնորդների հակադրումից, այլ նաև մեծ հաշվով, Մեծ Բրիտանիայի և Թուրքիայի աջակցությունից, որոնք «հետապնդում էին իրենց ստրատեգիական շահերը»<sup>13</sup>:

Մեծ Բրիտանիայի Կիպրոսի հարցում դիրքորոշման «կոշտացման» հետ մեկտեղ, աստիճանաբար «կոշտանում» են նաև «Էնոզիսի» համար պայքարողների հայացքները: Դեռևս 1951 թ., Կիպրոս վերադարձած հունական բանակի գնդապետ Գեորգեոս Գրիվասն իր «ուժային» ծառայություններն էր առաջարկել Մակարիոսին, որը սակայն մերժել էր, քանի որ դեռևս հավատում էր խնդրի քաղաքական լուծմանը, բացի դրանից Մակարիոսին դուր չէր գալիս Գրիվասի ծայրահեղականությունը: Չնայած սրան, Մակարիոսը սկզբնական շրջանում չափավոր համագործակցում էր Գրիվասի հետ: Այսպես օրինակ՝ մեկ տարի անց, 1952 թ. Աթենքում, Մակարիոսի գլխավորությամբ տեղի էր ունեցել Կիպրոսի ազատագրման կոմիտեի գաղտնի նիստ<sup>14</sup>:

«Էնոզիսի» համար պայքարի ռազմականացման գործում հատկապես կարևոր դեր ունեցավ 1954 թ. Գրիվասի կողմից ստեղծված ԷՕԿԱ-ն

<sup>12</sup> Степанов В. В., Кипрский конфликт: современное восприятие и проблема преодоления, М., 2012, с. 471.

<sup>13</sup> Иванова И. И., Колмыков С. Я., Мейер М. С. и др., 'Республика Кипр', Справочник. 3-е издание, М., 1992, <http://geography.su/books/item/f00/s00/z0000086/st014.shtml>

<sup>14</sup> Cyprus a country study, Edited by Solsten E., Fourth Edition, First Printing, 1993, p. 27-28.

(Εθνική Οργάνωσις Κυπρίων Αγωνιστών)՝ Կիպրացի մարտիկների ազգային կազմակերպությունը: ԷՕԿԱ-ն ըստ էության հանդես էր գալիս որպես պարտիզանական կազմակերպություն, որը չէր խորշում ահաբեկչական գործողություններ կատարելուց: ԷՕԿԱ-ի ահաբեկչական գործողություններն ուղղված էին բրիտանացի զինվորականների, քաղաքացիական պաշտոնյաների և նրանց ընտանիքների դեմ:

ԷՕԿԱ-ի պայքարի սկիզբ է համարվում 1955 թ. ապրիլի 1-ը, երբ Կիպրոսի միանգամից չորս քաղաքներում պայթյուններ որոտացին: Պայթյունից հետո թռուցիկներ տարածվեցին, որոնցում հայտարարվում էր, որ սկսվել է ռազմական գործողություններ՝ հանուն հույն-կիպրացիների ինքնորոշման: Այս թռուցիկներում հատկապես շեշտվում էին, որ «Օկուպանտներից ազատագրումը միշտ տեղի է ունենում արյամբ»<sup>15</sup>: Հետաքրքիր է նաև, որ Գրիվասը հանդես էր գալիս «Դիգենիա» կեղծանունով, ի պատիվ միջնադարյան հույն-կիպրացի հերոս Դիգենիա Ակրիտասի:

Չնայած սկսված պարտիզանական պայքարին և Հունաստանի կողմից ցուցաբերվող քարոզչական աջակցությանը, ԷՕԿԱ-ում շատ լավ հասկանում էին, որ ռազմական ճանապարհով անհնար է պարտության մատնել բրիտանացիներին և նրանց հիմնական նպատակն էր միջազգային հանրության ուշադրությունը հրավիրել Կիպրոսի խնդրին: ԷՕԿԱ-ն օգտագործելով Կիպրոսում ստեղծված լարվածությունը և միզազգային հանրության ճնշումները Մեծ Բրիտանիայի նկատմամբ, «ցանկանում էր համոզել Մեծ Բրիտանիայի հասարակությանը, որ Կիպրոսը ավելի շուտ բեռ է, քան կարողություն»<sup>16</sup>:

Մեծ Բրիտանիայում շատ արագ հասկացան, որ Կիպրոսում ստեղծված անկայունությունը և դրան հետևող միջազգային արձագանքը մեծ վտանգ են պարունակում Արևելյան Միջերկրականում՝ Մեծ Բրիտանիայի շահերի համար: Միջազգային բացասական արձագանքից խուսափելու համար, Մեծ Բրիտանիան Հունաստանին առաջարկում է Կիպրոսի հարցը լուծել բանակցությունների միջոցով, միաժամանակ Հունաստանի, Կիպրոսում ունեցած շահերը փորձում է հակադրել Թուրքիայի ստրատեգիական շահերով և չեզոքացնել Կիպրոսի հույների ինքնորոշման պահանջը:

Թուրքիան իր հերթին ակտիվորեն միանում է Մեծ Բրիտանիայի այս նախաձեռնությանը, այն ընդունելով որպես Կիպրոսում իր

<sup>15</sup> Степанов В. В., Кипрский конфликт: современное восприятие и проблема преодоления, М., 2012, с. 473.

<sup>16</sup> Charters D. A., Counter-insurgency Intelligence: The Evolution of British Theory and Practice, <https://journals.lib.unb.ca/index.php/JCS/article/view/15233/20803>, p. 62.

ստրատեգիական շահերի ճանաչում: Թուրքիայում ակտիվորեն ստեղծվում են ազգայնական կազմակերպություններ, այսպես օրինակ՝ Կիպրոսի պաշտպանության ազգային կոմիտեն, «Կիպրոսը թուրքական է» կազմակերպությունը<sup>17</sup>:

Թուրքիայի Կիպրոսի նկատմամբ այս հետաքրքրությունն առաջին հերթին բացատրվում էր ստրատեգիական շահերով, որում գլխավոր դեր էին խաղում հատկապես աշխարհագրական և ռազմա-ստրատեգիական գործոնները: Կիպրոսը գտնվում էր Թուրքիայից ընդամենը 70կմ հեռավորության վրա, բայց հեռու էր մայրցամաքային Հունաստանից 800կմ-ով, իսկ ամենամոտ գտնվող հունական կղզուց՝ Հռոդոսից 400կմ: Եթե Կիպրոսը Մեծ Բրիտանիային անհրաժեշտ էր որպես Մերձավոր Արևելքում պլանացրած, ապա Հունաստանին՝ որպես պատմական հունական տարածք և իր նշանակությամբ կրթարժանիքներ Հունաստանի միջազգային նշանակությունը, ինչպես նաև թույլ կտար Հունաստանին սպառնալու իր պատմական հակառակորդ Թուրքիային՝ ստրատեգիապես ձեռնադրել հեռավորությունից: Այսպիսով, Թուրքիային անհրաժեշտ էր թույլ չտալ Հունաստանին հաստատվել Կիպրոսում և սպառնալ իր ստրատեգիապես կարևոր և միևնույն ժամանակ ավանդաբար խնդրահարույց շրջաններին<sup>18</sup>:

Հունաստանի և Թուրքիայի Կիպրոսի հարցում ներգրավվածության պաշտոնական ճանաչումը տեղի ունեցավ 1955 թ. օգոստոսի 29-ից սեպտեմբերի 7-ը տեղի ունեցած Լոնդոնի կոնֆերանսի ժամանակ, որին մասնակցում էին Մեծ Բրիտանիան, Հունաստանը և Թուրքիան, արտգործնախարարներ Հ. Մ. Մակմիլանը, Ս. Ստեֆանոպոլոսը և Ֆ. Ռ. Չոլուն: Կոնֆերանսի քննարկման պաշտոնական թեման ռազմա-քաղաքական դրությունն էր Մերձավոր Արևելքում և Արևելյան Միջերկրականում, սակայն, բոլորի համար էլ պարզ էր, որ հիմնական կետը Կիպրոսի խնդիրն էր: Այս կոնֆերանսով փաստորեն ճանաչվեցին երեք երկրների շահերը Կիպրոսի խնդրում: Հետաքրքիր է նաև, որ կոնֆերանսին հրավիրված չէր Կիպրոսի ներկայացուցիչը՝ արքեպիսկոպոս Մակարիոսը, ով դեմ էր կոնֆերանսին և գտնում էր, որ կիպրական հարցը Հունաստանի և Թուրքիայի քաղաքական խնդիրը չէ, այն զուտ ինքնորոշման խնդիր էր, որը վերաբերվում էր միմիայն Կիպրոսի ժողովրդին և Մեծ Բրիտանիայի կառավարությանը<sup>19</sup>: Հունաստանի կոնֆերանսին մասնակցությունը և ըստ այդմ Կիպրոսում

<sup>17</sup> Поцхверия Б. М., Внешняя политика Турции после второй мировой войны, М., 1976, с.202.

<sup>18</sup> Гаджиев Ф., Независимость де-факто: Турецкая Республика Северного Кипра, М., 2008, с.37.

<sup>19</sup> Tornaritis C. G., Q. C., Attorney-General of the Republic, II edition, Nicosia, 1980, <http://kypros.org/Documents/Tornaritis/docs/nicosia.html>, chapter III.

Թուրքիայի շահերի ճանաչումը բավական վիճելի էր: Սակայն, հաշվի առնելով Թուրքիայի արդեն իսկ ներգրավվածությունը և Մեծ Բրիտանիայի աջակցությունը դրան, ըստ էության Թուրքիայի շահերի ճանաչումը անխուսափելի էր դառնում:

Կոնֆերանսը կողմերի հակադիր պահանջների պայմաններում, երբ Հունաստանը պահանջում էր ճանաչել Կիպրոսի հույների ինքնորոշման իրավունքը, իսկ Թուրքիան պահանջում էր պահպանել ստատուս-քվոն, դատապարտված էր ձախողման: Դեռևս կոնֆերանսից մի-քանի օր առաջ՝ օգոստոսի 24-ին, Թուրքիայի վարչապետ Ա. Մենդերեքը հայտարարել էր. «այս երկիրը (Թուրքիան) երբեք չի ընդունի Կիպրոսի կարգավիճակի ոչ մի փոփոխություն ո՛չ այսօր, ո՛չ էլ ապագայում, դա դեմ է (Թուրքիայի) պետական շահերին»<sup>20</sup>: Բրիտանական կողմն իր հերթին, ըստ հույն դեսպանի խոսքերի, կոնֆերանսի վերջում առաջարկել էր «թվագյալ ինքնավարություն», որն ըստ հույն դեսպանի «չստ անցանկալի ինքնավարություն» էր, քանի որ այն ենթադրում էր ստեղծել վերահսկողության կոմիտե Լոնդոնում: Սա ոչ այլ ինչ էր քան առաջարկ՝ Կիպրոսում ստեղծել համատեղ եռակողմ կոնդոմինիում, որտեղ թուրք փոքրամասնությունը և Մեծ Բրիտանիան գերակայելու էին հույն մեծամասնության նկատմամբ<sup>21</sup>:

Կոնֆերանսի օրերին, հունական կողմի վրա ճնշումներ գործադրելու նպատակով, Թուրքիայիում կտրուկ ուժեղանում են հակահունական, ազգայնական, շովինիստական տրամադրությունները: «Կիպրոսը թուրքական է» կարգախոսի ներքո ցույցեր, հանրահավաքներ են տեղի ունենում: Կիպրոսի թուրքական դրոշով պատկերները հայտնվում են թերթերում, ամսագրերում, տրանսպորտային միջոցների, փողկապերի և այլնի վրա<sup>22</sup>: Հակահունական տրամադրությունների գագաթնակետն է դառնում սեպտեմբերի 6-7-ը Ստամբուլում և Իզմիրում տեղի ունեցած հակահունական ջարդերը: Թուրքական դատարանների տվյալների համաձայն, 1955 սեպտեմբերի 6-7-ի գարդերի ժամանակ սպանվել է 15 մարդ, որոնցից 5-ը հույն հոգևորականներ, հարձակման են ենթարկվել ոչ մուսուլմանների, հիմնականում՝ հույների և հայերի 4214 խանութ, 1004 տուն, 73 եկեղեցի, 1 սինագոգ, 2 վանք, 26 դպրոց, ինչպես նաև

<sup>20</sup> Dodd C., The History and Politics of the Cyprus Conflict, 2010, p. 20-21.

<sup>21</sup> United States Department of State, Foreign relations of the United States, 1955-1957, Soviet Union, Eastern Mediterranean (1955-1957), <https://search.library.wisc.edu/digital/AAWHTLF6G6VB739B>, p. 286.

<sup>22</sup> Поцхверия Б. М., Внешняя политика Турции после второй мировой войны, М., 1976, с.202.



գործարան, հյուրանոց, բար, գերեզմանատուն, դեղատուն, լաբորատորիա, տպարան, ընդհանուր առմամբ 5622 օբյեկտ<sup>23</sup>:

Հետաքրքիր է նաև, որ հետագայում տարբեր փաստերի հիման վրա բացահայտվեց, որ Մալոնիկում Աթաթյուրքի տան վրա ժուժք նետելը, որը և պատճառ էր դարձել ջարդերի, կազմակերպվել էր թուրքական հաստուկ ծառայությունների կողմից<sup>24</sup>: Բացի դրանից, թուրքական տարբեր բարձրաստիճան պաշտոնյաների, այդ թվում նաև նախկին նախագահ Ջ. Բայարի և վարչապետ Ա. Մենդերեպի մեղավորությունները հակահունական ջարդերում ապացուցվեցին 1960 թ. Յասսըադա կղզում սկսված դատավարության ընթացքում: Այսպիսով, կարող ենք փաստել հունական ջարդերի պետական բարձր մակարդակով կազմակերպված լինելու մասին:

Եռակողմ կոնֆերանսի ավարտից հետո, 1955 թ. հոկտեմբերին Մեծ Բրիտանիան Կիպրոս է ուղարկում նոր նահանգապետ՝ ֆելդ-մարշալ Ջոն Հարդինգին, որն անմիջապես ուղիղ բանակցություններ է սկսում արքեպիսկոպոս Մակարիոսի հետ: Բանակցություններին թուրք-կիպրացիների որևէ ներկայացուցիչ ներգրավված չէր: Այսպիսով, Մակարիոսը հանդես էր գալիս ոչ թե հույն-կիպրացիների, այլ որպես ամբողջական Կիպրոսի առաջնորդ: Ընթացող բանակցությունների հետ մեկտեղ, Հարդինգը Կիպրոսում նոյեմբերից մտցնում է արտակարգ դրություն և ներգրավելով ռազմական նոր ուժեր, սկսում է ակտիվ պայքար ԷՕԿԱ-ի դեմ: Հանուն արդարության, սակայն պետք է նշել, որ բրիտանացիները ի սկզբանե այդքան էլ լուրջ չէին վերաբերվում Մակարիոսի հետ բանակցություններին: Ասպես օրինակ՝ Է. Իդենը համոզված էր, որ Կիպրոսի խնդիրը կարող է լուծվել միմիայն Մեծ Բրիտանիայի, Հունաստանի և Թուրքիայի կառավարությունների բանակցությունների արդյունքում<sup>25</sup>:

1955 թ. հոկտեմբերից 1956 թ. մարտ ընթացող բանակցությունների հիմնական մեխը բրիտանացիների առաջարկն էր՝ Կիպրոսին տրամադրել ինքնավարություն բրիտանական տիրապետության կազմում: Սակայն, Մակարիոսը հաշվի առնելով ԷՕԿԱ-ի անգիջում դիրքորոշումն «էնոզիսի» վերաբերյալ, բրիտանացիների առաջարկը մերժեց: 1956 թ. մարտի 9-ին Մակարիոսը ձերբակալվում է և Կիպրոսի երեք այլ եպիսկոպոսների հետ

<sup>23</sup> Մելքոնյան Ռ., 1955 թվականի սեպտեմբերի 6-7-ի դեպքերը (Թուրքիայում բրիտանյա փոքրամասնությունների դեմ բռնությունների հերթական դրսևորումը, Արևելագիտության հարցեր, Երևան, 2013, էջ 152:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 152:

<sup>25</sup> Stavrou M. M., Resolving the Cyprus Conflict: Negotiating History, 2009, p. 21-22.

մեկտեղ արտրվում է Մեյշեյան կղզիներ, որտեղ անցկացնում է մեկ տարուց ավել<sup>26</sup>:

Մակարիոսին բրիտանացիները համարում էին ԷՕԿԱ-ի առաջնորդ և նրա արտաքսումով հույս ունեին վերացնել Կիպրոսում անկայունությունը: Մակայն, արտաքսումը հակառակ էֆեկտ ունեցավ և ավելի բարձրացրեց Մակարիոսի միջազգային հեղինակությունը: Միաժամանակ հույն-կիպրացիների անկախության համար պայքարի նոր առաջնորդ դարձավ, բրիտանացիների նկատմամբ իր կոշտ դիրքորոշումով և ահաբեկչական գործողություններով հայտնի Գեորգեոս Գրիվաքը, ով սաստկացրեց ահաբեկչական գործողությունները բրիտանացիների դեմ:

Բրիտանացիներն ընդդեմ հունական «Էնոզիսի», 1950-ական թթ. կեսերից, սկսում են բացահայտորեն աջակցել թուրք-կիպրացիներին, ԷՕԿԱ-ի դեմ պայքարի շրջանակներում, բրիտանական գաղութային վարչակարգը ստեղծում է բացառապես թուրք-կիպրացիներից կազմված «օգնական ոստիկանական ուժեր»: Այսպես օրինակ՝ 1950-ական թթ. կեսերին, թուրք-կիպրացիների թիվը ոստիկանությունում կտրուկ աճելով գերազանցում էր 70%-ը (այն դեպքում, երբ նրանք կազմում էին բնակչության ընդամենը 18%-ը): Նրանք ակտիվորեն մասնակցում էին հակազաղութային ցույցերի ցրմանը, ձերբակալում էին անկախության համար շարժման ակտիվիստներին, խուզարկություններ էին իրականացնում հունական թաղամասերում, ինչը բնականաբար մեծացնում էր երկու համայնքների միջև թշնամանքը<sup>27</sup>:

Ըստ էության, Կիպրոսի հունական և թուրքական համայնքների միջև թշնամանքի առաջացումը ձեռնտու էր Մեծ Բրիտանիային: Մեծ Բրիտանիան օգտվելով համայնքների միջև թշնամանքից, հնարավորություն էր ստանում հանդես գալ խաղաղարարի դերում և միջազգային հանրությանը ցույց տալ կղզում իր իշխանության պահպանման անհրաժեշտությունը, քանի որ բրիտանացիների իշխանության վերացումը սպառնում էր կղզում երկու համայնքների միջև հրահրել քաղաքացիական պատերազմ:

Ըստ էության պետք է փաստել, որ մինչև 1955 թ. Կիպրոսում գրեթե բացակայում էին միջհամայնքային խնդիրները: Նույնիսկ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ Հունաստանը և Մեծ Բրիտանիան կռվում էին մեկ, իսկ Թուրքիան մյուս կողմում, թուրք-

<sup>26</sup> Иванова И. И., Колмыков С. Я., Мейер М. С. и др., 'Республика Кипр', Справочник. 3-е издание, М., 1992, <http://geography.su/books/item/f00/s00/z0000086/st014.shtml>

<sup>27</sup> Иванова И. И., История и современное состояние Кипрского вопроса, Турция на рубеже XX-XXI веков, М., 2008, с. 34.

կիպրացիների և հույն-կիպրացիների միջև Էսկան թշնամանք չառաջացավ: Սակայն, երբ թուրք-կիպրացիները հազան բրիտանական համազգեստ և սկսեցին մասնակցել հունական ազատագրական շարժման ճնշմանը, նրանց ուղղությամբ հույն-կիպրացիները սկսեցին կրակել<sup>28</sup>:

Սակայն, ի սկզբանե ԷՕԿԱ-ն նպատակ չունեի ահաբեկչության թիրախ դարձնել թուրք-կիպրացիներին, ԷՕԿԱ-ի գործողությունների հիմնական թիրախը բրիտանացիները և նրանց հետ համագործակցող հույն-կիպրացիներն էին: Նույնիսկ կան տվյալներ, որ ԷՕԿԱ-ն թուրք-կիպրացիներին դիտարկում էր որպես պոտենցիալ դաշնակիցներ՝ ընդդեմ գաղութարարների, կամ գոնե նրանց, ովքեր չէին խանգարի իրենց պայքարին<sup>29</sup>:

Բավական հետաքրքիր փոփոխություններ են տեղի ունենում նաև Կիպրոսի հարցում թուրքական դիրքորոշման հետ կապված: Թուրքիայի «Կիպրոսը թուրքական է» լոզունգը, որը ենթադրում էր հավակնություններ ամբողջ Կիպրոսի նկատմամբ, աստիճանաբար փոխվում է «բաժանում կամ մահ» լոզունգով («Ya bölüm, ya ölüm»): Ստեղծվում է Կիպրոսի հարցում Թուրքիայի նոր արտաքին քաղաքական «թաքսիմի» դոկտրինը, որի նպատակն էր Կիպրոսը բաժանել երկու՝ հունական և թուրքական մասերի:

Թուրք քաղաքական գործիչները, Կիպրոսը Թուրքիային ամբողջությամբ միացնելուց հրաժարումը և «թաքսիմի» դոկտրինին անցումը, բացատրում էին նրանով, որ «յիսթարվեր ՆԱՏՕ-ի երկրների միջև համերաշխությունը»<sup>30</sup>: Ի օգուտ «թաքսիմի», 1957 թ. սեպտեմբերի 22-ին, Վաշինգտոնում Թուրքիայի ֆինանսների նախարար Հ. Փոլաթթանը հայտարարեց. «26 միլիոն թուրքեր ցանկանում են Կիպրոսի բաժանումը»<sup>31</sup>: Այսպիսով, Թուրքիան պաշտոնապես հունական «Էնոզիար» (միացում) հակադրեց իր «թաքսիմով» (բաժանում):

Բացի արտաքին քաղաքական ակտիվությունից, Թուրքիան սկսում է ակտիվորեն ներգրավվել նաև Կիպրոսի թուրքերի ներքին կյանքին: ԷՕԿԱ-ի դեմ պայքարելու նպատակով, Թուրքիայի աջակցությամբ ստեղծվում են թուրք-կիպրացիների զինված կազմակերպություններ (Volkan, Kara Çete և այլն), որոնք 1957 թ. նոյեմբերին միանալով, ստեղծում են Թուրքական դիմադրության կազմակերպությունը՝ TMT

<sup>28</sup> Иванова И. И., Колмыков С. Я., Мейер М. С. и др., 'Республика Кипр', Справочник. 3-е издание, М., 1992, <http://geography.su/books/item/f00/s00/z0000086/st014.shtml>

<sup>29</sup> Степанов В. В., Кипрский конфликт: современное восприятие и проблема преодоления, М., 2012, с. 473

<sup>30</sup> Cumhuriyet, 15.07.1957, <https://www.cumhuriyetarsivi.com/monitor/index.xhtml>

<sup>31</sup> Cumhuriyet, 23.09.1957, <https://www.cumhuriyetarsivi.com/monitor/index.xhtml>

(Türk Mukavemet Teşkilatı): TMT-ի հիմնադիրներն են համարվում Ռաուֆ Ղենքթաշը և թուրք զինվորական Ռըզա Վուրուշքանը: Այս կազմակերպության ստեղծման առաջին իսկ օրից Թուրքիան տրամադրում էր ռազմական օգնություն՝ զենքի և ռազմական հրահանգիչների տեսքով: Միևնույն ժամանակ TMT-ն իր կառուցվածքով և գործելաոճով նմանակում էր իր հիմնական հակառակորդ ԷՕԿԱ-ին: Պետք է նշել նաև, որ թուրք-կիպրացիների զինված կազմակերպությունների ստեղծմանը մեծապես նպաստում էր նրանց նկատմամբ Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականությունը. այսպես օրինակ՝ այն ժամանակ, երբ բոլոր հունական քաղաքական կուսակցությունները արգելված էին, բրիտանական իշխանությունները թույլատրում են թուրք-կիպրացիներին ստեղծել «Կիպրոսը թուրքական է» անունով քաղաքական կուսակցություն: Բացի դրանից, մինչ ԷՕԿԱ-ի շատ անդամներ բանտարկված կամ կախաղան էին բարձրացված, թուրք-կիպրացիների ահաբեկչական Volkan խմբի միայն շատ քիչ անդամների էին փորձել ձերբակալել<sup>32</sup>:

1956 թ., Սուեզի ճգնաժամից հետո, Է. Իդենի կառավարությունը հրաժարական է տալիս: 1957 թ. հունվարին, Մեծ Բրիտանիայի վարչապետ է դառնում Հ. Մ. Մակմիլանը, ով Կիպրոսի հարցում ուներ ավելի մեղմ դիրքորոշում: Մակմիլանի որոշումով արքեպիսկոպոս Մակարիոսը և Կիրենեի եպիսկոպոս Կիպրիանը, ովքեր արտրված էին Սեյշելյան կղզիներ, 1957 թ. մարտի 28-ին ազատ են արձակվում: Մակարիոսը հաստատվում է Աթենքում, քանի որ նրան դեռևս արգելված էր վերադառնալ Կիպրոս<sup>33</sup>:

Մակմիլանի քաղաքականության մեղմացումը պայմանավորված էր նրանով, որ Մեծ Բրիտանիայում արդեն հոգնել էին քաղաքականապես և ֆինանսապես ոչ ձեռնառու և հյուժիչ Կիպրոսի խնդրից: Մակմիլանի կիպրական նոր քաղաքականությամբ պայմանավորված, Կիպրոսի նահանգապետ Ջ. Հարդինգին փոխարինելու է գալիս նոր, «ավելի մեղմ» նահանգապետ՝ Հ. Մ. Փուտը: Նոր նահանգապետը միանգամից առաջարկում է սկսել բանակցություններ երկու համայնքների առաջնորդների հետ և վերացնել արտակարգ դրությունը:

1958 թ. հունիսին, Մեծ Բրիտանիան պաշտոնապես հանդես է գալիս Կիպրոսի հարցի լուծման «Մակմիլանի նախագծով»: Այս նախագծով նախատեսվում էր Կիպրոսի հարցի լուծման մեջ ավելի մեծ տեղ հատկացնել մյուս շահագրգիռ երկրներին՝ Հունաստանին և Թուրքիային:

<sup>32</sup> Mallinson W., Cyprus: A Modern History, London and New York, 2005, p. 23.

<sup>33</sup> Нестеров А., Златоустова М., Британский проект урегулирования ситуации на Кипре в 1957-1958 годах: «план Макмиллана», Научный диалог, N 5, 2017, с. 244.

Բացի դրանից, նախատեսվում էր Կիպրոսի բնակիչներին, ըստ ազգային պատկանելության, բացի բրիտանականից, տալ նաև հունական կամ թուրքական քաղաքացիություն: Այս առաջարկին հատկապես դեմ էր արքեպիսկոպոս Մակարիոսը, ով այս նախագիծն ավելի շուտ նմանեցնում էր եռակողմ կոնդոմինիումի: «Մակմիլանի նախագիծը» քննադատվեց նաև բրիտանական լեյբորիստների կողմից, ովքեր հայտարարեցին, որ այն ավելի շուտ կբաժանի Կիպրոսի համայնքներին, քան պայմաններ կստեղծի խաղաղ գոյակցության համար<sup>34</sup>: «Մակմիլանի նախագիծին» ըստ էության դեմ էր նաև Հունաստանը, ում դուր չէր գալիս Թուրքիայի ավելի ու ավելի ակտիվ ներգրավվումը Կիպրոսի խնդրին: Սրան հակառակ, «Մակմիլանի նախագիծը» բավական գրավիչ և ձեռնառու էր Թուրքիայի համար:

«Մակմիլանի նախագիծ» շուրջ միջազգային թեժ քննարկումների ֆոնին, իրավիճակը 1958 թ. ամռանը բավական պայթյունավտանգ դարձավ նաև Կիպրոսում: Իրավիճակի թեժացման հրահրողը դարձան թուրք-կիպրացի ծայրահեղականները: Հունիսի 7-ին, ժամը 22:00 ՉԼՄ-ների գծով թուրք խորհրդականի տան վերանդայում պայթյուն է տեղի ունենում: Չնայած վնասը չնչին էր, կղզու թուրք երիտասարդությունը սկսում է անկարգություններ և հրկիզումներ, վնասելով հույն-կիպրացիների գույքը: Շուտով, Նիկոսիայի հունական մասում, եկեղեցիների զանգերի ձայնով, հավաքվում է հույն երիտասարդությունը և սկսվում են բախումներ հույների և թուրքերի միջև: Ապացուցված փաստ է համարվում բախումների ժամանակ երկու հույն-կիպրացիների մահը և նաև այն, որ ռումբի պայթյունը, որը պատճառ էր դարձել անկարգություններին, կազմակերպված էր եղել հենց թուրքերի կողմից<sup>35</sup>: Հետաքրքիր է նաև այն, որ 1958 թ. ամռան Նիկոսիայի դեպքերը սկսվեցին նույն կերպ, ինչ 1955 թ. սեպտեմբերի 6-7-ի Ստամբուլում և Իզմիրում հակահունական ջարդերը, երկու դեպքում էլ թուրքական հատուկ ծառայությունների ձեռագիրը նույնն էր:

Ընդհանուր առմամբ, երկու ամիս տևած թուրք-հունական բախումների ժամանակ զոհվեցին 56 մարդ հունական և 53 մարդ թուրքական կողմերից<sup>36</sup>: Իրավիճակը Կիպրոսում կայունացնելու նպատակով, Մեծ Բրիտանիան հավելյալ ռազմական ուժեր է ներգրավում, բացի դրանից Նիկոսիայում մտցվում է պարետային ժամ, իսկ քաղաքի հունական և թուրքական թաղամասերի միջև տեղակայվում

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 246:

<sup>35</sup> Mallinson W., Turkish bombs and riots in Cyprus: Handling the facts, <https://hellasjournal.com/2014/05/turkish-bombs-and-riots-in-cyprus-handling-the-facts/>

<sup>36</sup> Нестеров А. Г., Златоустова М. И., նշված աշխ., էջ 247.

են բրիտանական զորքեր: Այսպիսով, 1958 թ. ամռանը տեղի է ունենում Կիպրոսի համայնքների միջև առաջին փաստական բաժանումը:

Այս իրադարձություններից հետո իր գործողություններն ակտիվացնում է նաև ԷՕԿԱ-ն: Մեծ Բրիտանիային մեղադրելով ընդդեմ հույների Թուրքիայի հետ դավադրության մեջ, ԷՕԿԱ-ն կոչ է անում դադարեցնել բոլոր հաղորդակցությունները բրիտանական գաղութային կառավարության հետ, միաժամանակ ակտիվացնում է ռազմական գործողությունները: Այս բարդ ժամանակաշրջանում էլ արքեպիսկոպոս Մակարիոսը հանդես է գալիս Կիպրոսի խնդրի լուծման իր այլընտրանքային տարբերակով, նա առաջարկում էր ՄԱԿ-ի հովանու ներքո Կիպրոսում ստեղծել անկախ պետություն:

Մակարիոսի այս առաջարկը ձեռնտու չէր ՆԱՏՕ-ին և նրա գլխավոր երկիր ԱՄՆ-ին, քանի որ ՄԱԿ-ի հովանու ներքո տրվող անկախությունն ըստ էության չէր լուծում ՆԱՏՕ-ի անդամ երկու երկրների՝ Թուրքիայի և Հունաստանի միջև եղած հակասությունները: Կիպրոսն իր ստրատեգիական դիրքով և բրիտանական ռազմաբազաներով կարևոր տեղ էր զբաղեցնում ՆԱՏՕ-ի հարավարևելյան ճակատի պաշտպանական համակարգում: Բացի դրանից, ՆԱՏՕ-ի և ԱՄՆ-ի համար, հաշվի առնելով «սառը պատերազմի» իրողությունը, շատ կարևոր էր, որ Կիպրոսի խնդիրը լուծվի ոչ թե ՄԱԿ-ի հովանու ներքո, այլ բացառապես ՆԱՏՕ-ի շրջանակում: Այս նպատակն իրագործելու համար էլ Միացյալ Նահանգները, Կիպրոսի հարցում կողմերի դիրքորոշման մեղմացման համար Թուրքիայի, Հունաստանի և Մեծ Բրիտանիայի վրա բանեցնում է բազմակողմանի դիվանագիտական ճնշում:

1957 թ. օգոստոսի 2-ին, ԱՄՆ-ի պետքարտուղար Ջ. Ֆ. Դալլերը Լոնդոնում Թուրքիայի դեսպանի հետ հանդիպման ժամանակ, առաջին պլան բերելով ընդհանուր հետաքրքրությունները, խորհուրդ տվեց Թուրքիային չչարունակել կղզու բաժանման պահանջը: ԱՄՆ-ի ճնշումները սակայն առաջին հերթին ուղղված էին Հունաստանին, որը և ի վերջո ընդունեց «Կիպրոսին տալ անկախություն՝ միջազգային երաշխիքների պայմաններում» նախագիծը<sup>37</sup>: Այսպիսով, կարող ենք ասել, որ ՄԱԿ-ի փոխարեն Կիպրոսի հարցի լուծման հարթակ դարձավ ՆԱՏՕ-ն:

Կիպրոսի հարցի որոշիչ բանակցությունները սկսվեցին 1959 թ. փետրվարին: Նախ բանակցություններն ընթացան փետրվարի 5-11-ը Ցյուրիխում, Հունաստանի և Թուրքիայի վարչապետեր Կ. Կարամանլիսի, Ա. Մենդերեսի և արտգործնախարարներ է. Ավերոֆֆ-Տոսիցասի և Ֆ. Ռ. Չոռլուի միջև, իսկ հետո փետրվարի 11-16-ը

<sup>37</sup> Поцхверия Б., Внешняя политика Турции после второй мировой войны, М., 1976, с. 206.

բանակցություններին Լոնդոնում միացան Մեծ Բրիտանիայի վարչապետ Հ. Մ. Մակմիլանը և արտգործնախարար Ս. Լոյդը: Այս բանակցություններում, Կիպրոսի հարցի լուծման վերջնական պայմանավորվածություններ ձեռք բերելուց հետո միայն, փետրվարի 17-19-ին, Լոնդոնում բանակցություններին միացան հույն-կիպրացիների առաջնորդ Մակարիոսը և թուրք-կիպրացիների ներկայացուցիչ Ֆ. Քյուչուքը, որոնց ստիպեցին ստորագրել արդեն իսկ ձեռք բերված պայմանավորվածությունների տակ<sup>38</sup>: Փաստացի, Կիպրոսի ճակատագիրը որոշվեց Հունաստանի և Թուրքիայի կողմից Մեծ Բրիտանիայի աջակցությամբ և առանց Կիպրոսի երկու համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Չնայած սրան, լոնդոնյան բանակցությունների ժամանակ, Մակարիոսը Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Ս. Լոյդին ներկայացրեց 13 կետից բաղկացած իր առարկությունները համաձայնագրի վերաբերյալ: Սակայն, Կիպրոսի արքեպիսկոպոսին բացահայտ ասեցին, որ իր համառության և համաձայնագիրը չստորագրելու դեպքում, Կիպրոսը կբաժանվի Հունաստանի և Թուրքիայի միջև: Հանուն Կիպրոսի միասնության և անկախության պահպանման, Մակարիոսն ի վերջո ստիպված էր ստորագրել: Այսպես, Կիպրոսը ստացավ երկար ցանկալի, բայց սահմանափակված անկախություն<sup>39</sup>:

1959 թ. մարտի 1-ին, եռամյա ընդմիջումից հետո, Մակարիոսը վերադառնում է Կիպրոս: 1959 թ. դեկտեմբերի 13-ի ընտրություններում, հավաքելով ընտրողների 67 %-ի ձայները, նա ընտրվում է Կիպրոսի նախագահ: 1960 թ. օգոստոսի 16-ին հաստատվում է Կիպրոսի սահմանադրությունը<sup>40</sup> և ստորագրվում են երեք պետականաստեղծ պայմանագրերը, ինչպես նաև հռչակվում է Կիպրոսի անկախությունը: Այդ երեք պայմանագրերը դեռևս քննարկվել և որոշվել էին Յուրիխ-Լոնդոնյան բանակցությունների ընթացքում: «Կիպրոսի հանրապետության ստեղծման» պայմանագրով, Մեծ Բրիտանիան պահպանեց կղզում իր երկու ռազմաբազաները՝ Ղեկելին և Ակրոտիրին, ընդհանուր 99 քառակուսի մղոն տարածքով: Բացի դրանից, Մեծ Բրիտանիան իրավունք էր ստանում անարգելք օգտագործել կղզու ենթակառուցվածքներն իր ռազմաբազաների կարիքների համար:

<sup>38</sup> Егоров Б., Кипр: тревоги и надежды, «Знание», М., 1986, с. 14.

<sup>39</sup> Иванова И., Колмыков С. Я., Мейер М. С. и др., 'Республика Кипр', Справочник. 3-е издание, М., 1992, <http://geography.su/books/item/f00/s00/z0000086/st014.shtml>

<sup>40</sup> Конституция Кипра от 16 августа 1960 года, [http://www.concourt.am/armenian/legal\\_resources/world\\_constitutions/constit/cypros/cyprus-r.htm](http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/cypros/cyprus-r.htm)

Հաջորդը «Դաշինքի մասին» պայմանագիրն էր, որով նախատեսվում էր, որ կղզու պաշտպանությունը պետք է իրականացվեր համատեղ՝ Մեծ Բրիտանիայի, Հունաստանի, Թուրքիայի և Կիպրոսի ջանքերով: Կղզում պետք է ստեղծվեր միացյալ ռազմական շտաբ, և բացի 2750 բրիտանացի զինվորներից, Կիպրոսում նախատեսվում էր տեղակայել նաև 950 հույն և 650 թուրք զինվորականներ, որոնք օգնելու էին Կիպրոսի Ազգային գվարդիայի ձևավորմանը:

Ամենակարևորը սակայն «Երաշխիքների մասին» պայմանագիրն էր: Այս պայմանագրով երեք երկրները՝ Մեծ Բրիտանիան, Հունաստանը և Թուրքիան «երաշխավորում էին Կիպրոսի անկախությունը, տարածքային ամբողջականությունը, անվտանգությունը, ինչպես նաև Սահմանադրությունը», միաժամանակ երեք երաշխավորները պարտավորվում էին «արգելել ցանկացած գործողություն, որն ուղղակի կամ անուղղակի կրեեր Կիպրոսի միավորմանն այլ երկրի հետ, կամ կհանգեցնեի կղզու բաժանմանը»: Ըստ էության, այս ամենը նպատակ ուներ բացառելու «Էնոզիսը» և «թաքսիմը»: Բացի դրանից, այս պայմանագրով երաշխավորներն իրավունք էին ստանում «ձեռնարկելու գործողություններ՝ պայմանագրով նախատեսված կարգը վերականգնելու նպատակով», ինչը փաստացի իրավունք էր տալիս երաշխավորներին, ընդհուպ ռազմական ճանապարհով խառնվելու Կիպրոսի ներքին գործերին:

Ընդհանուր առմամբ, վերլուծելով Երկրորդ համաշխարհային պատերազմից մինչև 1960 թ. Կիպրոսի անկախության հռչակումը տեղի ունեցած գործընթացները, կարող ենք հստակորեն տեսնել, թե ինչպես է փոփոխվում Կիպրոսի ինքնիշխանության համար պայքարի բնույթը և ինչպես է Կիպրոսի հարցը աստիճանաբար միջազգայնանում: Սկզբնական շրջանում Կիպրոսի հարցը զուտ հույն-կիպրացիների հակազաղութային, ազգային-ազատագրական պայքարն էր ընդդեմ Մեծ Բրիտանիայի: Սակայն, շուտով հույն-կիպրացիների իրավունքները միջազգային հարթակներում պաշտպանելու նպատակով, Կիպրոսի հարցում սկսում է ակտիվորեն ներգրավվել նաև Հունաստանը: Հաջորդ երկիրը, որը Մեծ Բրիտանիայի աջակցությամբ ներգրավվում է Կիպրոսի հարցում Թուրքիան էր, որն առաջին հերթին առաջնորդվում էր իր սեփական ստրատեգիական շահերով: Մեծ Բրիտանիան իր հերթին հասկանալով, որ ուշ թե՛ շուտ հեռանալու է Կիպրոսից, բանակցություններով փորձում էր իր հեռանալու դիմաց հնարավորինս շատ արտոնություններ ստանալ:

Բացի Կիպրոսի հարցի միջազգայնացումից և շահագրգիռ երկրների ներգրավումից, Մեծ Բրիտանիայի հաշվենկատ քաղաքականության արդյունքում, փոխվում է նաև կիպրական հարցի բնույթը:



Հակազաղութային, ազգային-ազատագրական պայքարից այն սկսում է աստիճանաբար վերածվել Կիպրոսի երկու՝ հունական և թուրքական համայնքների միջև խնդրի: Արտաքին քաղաքականության մեջ նույնպես բուն կիպրացիների դերը գնալով ավելի ու ավելի է նվազում, ինչի արդյունքն է Մակարիոսի և Քյուլյուքի Ցյուրիխ-Լոնդոնյան բանակցություններին ձևական մասնակցությունը: Ցյուրիխ-Լոնդոնյան բանակցություններում, ըստ էության Կիպրոսի ժողովրդի ապագան որոշվեց առանց Կիպրոսի ներկայացուցիչների մասնակցության, երեք երկրների՝ Մեծ Բրիտանիայի, Հունաստանի և Թուրքիայի կողմից, իրենց սեփական շահերին համապատասխան:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոնշյալը, կարող ենք ասել, որ Կիպրոսը չնայած իր ստացած անկախությանը, չէր կարող համարվել լիովին ինքնիշխան ինքնուրույն երկիր: Այն Ցյուրիխ-Լոնդոնյան համաձայնություններով մշտապես գտվելու էր իր երեք երաշխավոր երկրներից կախվածության մեջ: Բացի դրանից, Կիպրոսի երեք երաշխավոր երկրները՝ Մեծ Բրիտանիան, Հունաստանը և Թուրքիան, Ցյուրիխ-Լոնդոնյան համաձայնություններով բազմաթիվ «օրինական» հնարավորություններ էին ստացել Կիպրոսի ներքին գործերին միջամտելու համար:

**THE INVOLVEMENT OF TURKEY AND GREECE IN THE  
PROBLEM OF CYPRUS AND THE INTERNATIONALIZATION OF  
THE PROBLEM**

***Khachatryan Rafik***

**(Summary)**

After the World War II in the conditions of progress of the anti-colonial movements national freedom struggle becomes active in Cyprus too. Already in 1955 Greek right national EOKA group in Cyprus began armed struggle in the aim of self-determination of the island. Still in 1954 Greece began to be involved actively in the problem of Cyprus which applied to UNO for solving the problem peacefully. United Kingdom in its turn wanting to keep its strategic positions in Cyprus in contrary to Greece from 1955 began to support involving Turkey in the question of Cyprus in result of which the question of Cyprus from local problem turns into a regional problem actively involving Greece and Turkey.